



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

**«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2019 թվականի գնումների պլանի
մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ**

ԵՐԵՎԱՆ 2019

Բովանդակություն

Նախաբան	3
1. «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2019 թվականի գնումների պլանի կառուցվածքը	4
2. «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2019 թվականի գնումների պլանի մոնիթորինգի արդյունքները	6
Հղումներ.....	7

Նախաբան

Սույն վերլուծական տեղեկանքը մշակվել է ի կատարումն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) 2019 թվականի աշխատանքային ծրագրի (այսուհետև՝ Որոշում 1) 11-րդ կետի և արտացոլում է հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի N°391Ա որոշման (այսուհետև՝ Որոշում 2) N°1 հավելվածով հաստատված ցանկում ընդգրկված հանրային կազմակերպությունների կողմից կազմված և հրապարակված գնումների պլանի համապատասխանության գնահատումը հանձնաժողովի Որոշում 2-ով սահմանված լրացուցիչ պահանջներին:

Հանրային կազմակերպության գնումների պլանի մոնիթորինգը ներառում է հանրային կազմակերպությունների կարիքներին համապատասխան ձեռքբերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների քանակի և ժամանակացույցի գնահատումը:

Վերլուծական տեղեկանքը կազմվել է «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի (այսուհետև՝ նաև Ընկերություն) 2019 թվականի տարեկան հաստատված բյուջեի (միայն լիցենզավորված գործունեության մասով) հիման վրա կազմված և հանձնաժողով ներկայացված գնումների պլանի մոնիթորինգի արդյունքում:

1. «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2019 թվականի գնումների պլանի կառուցվածքը

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ն՝ համաձայն հանձնաժողովի Որոշում 2-ով սահմանված լրացուցիչ պահանջների, իր պաշտոնական կայքում և գնումների էլեկտրոնային տեղեկագրում հրապարակել է 2019 թվականի համար հաստատված բյուջեի հիման վրա կազմված գնումների պլանը:

Համաձայն հրապարակված գնումների պլանի, Ընկերությունը 2019 թվականին պլանավորել է իրականացնել 1 255,2 մլն դրամի գնում (առանց ԱԱՀ)՝ 8 ուղղություններով, որի վերաբերյալ տվյալներն ըստ գնման առարկայի ներկայացված են աղյուսակ 1-ում:


Աղյուսակ 1

	Գնման ուղղությունը	Գնումների պլանային արժեքը մլն դրամ (առանց ԱԱՀ)	Գնման ուղղության մասնաբաժինը ընդհանուր գնումներում
1	Հիմական գործունեության ծախսեր, կապված էլեկտրաէներգիայի և հզորության իրացման հետ	270,95	22%
2	Մոնտաժ չպահանջող սարքավորումների գնում	33,1	3%
3	Վերանորոգման ծախսեր	446,6	36%
4	Շենքերի, կառույցների և սարքավորումների շահագործման ծախսեր	29,8	2%
5	Խորհրդատվական ծախսեր	20,0	2%
6	Այլ ոչ ֆունկցիոնալ ծախսեր	215,8	17%
7	Ապահովագրական ծախսեր	115,0	9%
8	Ադմինիստրատիվ տնտեսական ծախսեր	124,0	10%
	Ընդամենը	1 255,2	100%


Ըստ գնման ընթացակարգերի պլանավորված գործարքների վերաբերյալ տվյալների մոնիթորինգի արդյունքներն ամփոփված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

№	Գնման ընթացակարգեր	Պլանավորված գնումների քանակը (հատ)	Գնման ընթացակարգի մասնաբաժինը ընդհանուր գնումների մեջ (քանակային)	Գնումների սկզբնական պլանավորված արժեքը մլն դրամ (առանց ԱԱՀ)	Գնման ընթացակարգի մասնաբաժինը ընդհանուր գնումների մեջ (գումարային)	Գնման գործընթացի մեկնարկի ժամկետները (2019թ.)
1	2	3	4	5	6	7
1	Բաց մրցույթ	14	15,7%	570,41	45,4%	հունվար-հուլիս
2	Միակ աղբյուր	4	4,5%	449,5	35,8%	հունվար
3	Չկանոնակարգված գնումներ	70	78,7%	205,4	16,4%	հունվար-սեպտեմբեր
4	Առաջարկների բաց հարցում	1	1,1%	29,9	2,4%	հունվար
	Ընդամենը	89	100%	1255,2	100%	



Սկար 1. Գնման ընթացակարգի մասնաբաժինը ընդհանուր գնումների մեջ (քանակային)



Սկար 2. Գնման ընթացակարգի մասնաբաժինը ընդհանուր գնումների մեջ (գումարային)

2. «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2019 թվականի գնումների պլանի մոնիթորինգի արդյունքները

Ընկերության գնումների պլանի մոնիթորինգի արդյունքներից կարելի է փաստել, որ.

1. Ընկերության նախորդ տարիների Գնումների պլանների մոնիթորինգի շրջանակում հանձնաժողովի աշխատակազմն ուսումնասիրել էր ՀՀ ֆինանսների նախարարության գնումների էլեկտրոնային տեղեկագրում հրապարակված «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի գնումների կարգը: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ կայքում տեղադրված գնումների կարգում առկա են հղումներ չգործող օրենքերին և որոշումներին, ինչի մասին բազմիցս նշվել էր վերլուծական տեղեկանքներում, սակայն ընկերության կանոնակարգված գնումներ անցկացնելու կարգը մինչ այսօր չի համապատասխանեցվել գործող օրենքերին: Անհրաժեշտ էր փոփոխել գնումների կարգը և փոփոխված կարգը հանձնաժողով ներկայացնել՝ հանձնաժողովի Որոշում 2-ի պահանջներին համապատասխան:
2. Գնումների պլանն ընկերության պաշտոնական կայքում և ֆինանսների նախարարության գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է հանձնաժողովի Որոշում 2-ով սահմանված ժամկետում:
3. Ներկայացված չեն ընտրված գնման ձևերի կիրառման իրավական հիմքերը՝ նշելով ընկերության գնումների կարգի համապատասխան դրույթը:

Այս համատեքստում հարկ է նշել, որ անհրաժեշտ է հինգ աշխատանքային օրվա ընթացքում վերահրապարակել գնումների պլանը «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի պաշտոնական կայքում և ՀՀ ֆինանսների նախարարության գնումների պաշտոնական տեղեկագրում՝ հանձնաժողովի Որոշում 2-ի 13-րդ կետին համապատասխան՝ հաշվի առնելով մոնիթորինգի արդյունքներով ներկայացված թերությունները:

Հղումներ

- Որոշում 1. Հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» N°447L որոշում,
- Որոշում 2. Հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի «Գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջների սահմանման ենթակա հանրային կազմակերպությունների ցանկը հաստատելու, այդ կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջներ սահմանելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի N°61Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N°391Ա որոշում: